ՆՇԱԹԵՐԹ
պետական գրանցման
մասին տեղեկությունների

«ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» Պետական ոչ առեւտրային կազմակերպություն

Գրանցված է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից

Գրանցված է՝ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն

Աշխատակից՝ Հայկանուշ Նիկողոսյան

Գրանցման ամսաթիվ՝ 16.12.2002
Գրանցման համար՝ 264.210.06048
ՀՎՀՀ՝ 00007498

Պետական գրանցման մասին տեղեկությունների նշաթերթը էլեկտրոնային եղանակով ձևավորված է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգի կողմից և հանդիսանում է **«ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» Պետական ոչ առեւտրային կազմակերպություն** նոր խմբագրությամբ կանոնադրության անբաժանելի մասը:

Սույն նոր խմբագրությամբ կանոնադրության գրանցումը հավաստվում է համակարգի կողմից գեներացված RB8D-4363-82CB-8FDC ծածկագրով քաղվածքով, որի իսկությունը և արդիականությունը կարող է ստուգվել փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգում (e-verify.am):

Կազմված է «04» 08 2026թ.
Բաղկացած է 22 թերթից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ
2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 4-ի N 35-Լ
ՀՐԱՄԱՆՈՎ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԱՐԱԲԿԻՐ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ
ԿՈՂՄԻՑ
«16» դեկտեմբերի 2002թ.
գրանցման թիվ 264.210.06048
վկայական 03Ա 057799
Հարկ վճարողի հաշվառման համար
00007498
«11» փետրվարի 2021թ. գրանցված
կանոնադրության թիվ _____
փոփոխությունը գրանցված է ՀՀ
Արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից
«-----» ---------- 2026թ.

Աշխատակից՝_____

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(նոր խմբագրություն)

2026թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող պետական ոչ առևտրային կազմակերպություն է:

2. Կազմակերպությունը գրանցված է 2002 թվականի դեկտեմբերի 16-ին (գրանցման թիվ 264.210.06048, վկայական 03Ա 057799, ՀՎՀՀ 00007498):

3. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Բարձրագույն կրթության և գիտության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ օրենքներով և իրավական ակտերով, հիմնադրի և լիազոր մարմնի իրավական ակտերով, ինչպես նաև սույն կանոնադրությամբ: Հատուկ օրենքի և ընդհանուր օրենքի միջև հակասության դեպքում կիրառվում է հատուկ օրենքի կարգավորումը:

4. Կազմակերպության հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ հիմնադիր):

5. Կազմակերպության նկատմամբ կրթության և գիտության ոլորտներում պետական կառավարման լիազոր մարմինն է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին):

6. Կազմակերպությունը պատասխանատու չէ հիմնադրի պարտավորությունների համար: Հիմնադիրը պատասխանատու չէ կազմակերպության պարտավորությունների համար:

7. Կազմակերպությունն ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

8. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով, իր անունից կնքում է պայմանագրեր, ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում է

պարտականություններ, դատարանում հանդես է գալիս որպես հայցվոր կամ պատասխանող:

9. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և կազմակերպության հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

10. Կազմակերպության բանկային, գանձապետական կամ այլ հաշիվները և ենթահաշիվները բացվում, սպասարկվում և հայտարարագրվում են «Բարձրագույն կրթության և գիտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, բյուջետային օրենսդրությամբ և այլ կիրառելի իրավական ակտերով սահմանված կարգով: Չհայտարարագրված հաշիվներով գործարքներ կատարելը չի թույլատրվում:

11. Կազմակերպության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ ԵԳԻ ՊՈԱԿ:

3) ռուսերեն լրիվ՝ «Институт геологических наук» Государственная некоммерческая организация.

4) ռուսերեն կրճատ՝ ИГН ГНКО.

5) անգլերեն լրիվ՝ Institute of Geological Sciences State Non-Commercial Organization

6) անգլերեն կրճատ՝ IGS SNCO.

12. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք.Երևան, Բաղրամյան պողոտա 24Ա:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

13. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

1) իր մասնագիտացմանը համապատասխան գիտատեխնոլոգիական հետազոտությունների, փորձարարական մշակումների և նորարարական գործունեության իրականացումը.

ա. ընդհանուր և ռեգիոնալ երկրաբանություն,

բ. կառուցվածքային երկրաբանություն

գ. շերտագրություն,

դ. երկրադինամիկա,

ե. երկրատեկտոնիկա,

զ. հնէաբանություն,

է. սեյսմոտեկտոնիկա,

ը. սեյսմաբանություն և արխեոսեյսմաբանություն,

թ. նստվածքաբանություն,

ժ. մագմատիկ և մետամորֆային պետրոլոգիա,

ժա. հրաբխագիտություն,

ժբ. մետաղային և ոչ մետաղային օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանություն,

ժգ. մետաղագոյացում,

ժդ. երկրաքիմիական հետազոտություններ,

ժե. կիրառական երկրաֆիզիկա,

ժզ. իզոտոպային երկրաբանություն,

ժէ. ջրաերկրաբանություն և ջրաերկրաքիմիա,

ժը. ինժեներային երկրաբանություն,

ժթ. երկրաբանության զարգացման պատմություն

երկրաբանական և տեխնածին վտանգավոր երևույթների ուսումնասիրություն,

իա. հեռահար (դիստանցիոն) երկրաբանական հետազոտություններ,

իբ. սեյսմիկ և Գեոդինամիկ մոնիթորինգի ցանցերոի ստեղծում, սպասարկում,

իգ. սեյսմիկ տոմոգրաֆիա,

իդ. երկրաջերմային էներգիայի ռեսուրսների ուսումնասիրություն երկրաբանական և գեոֆիզիկական մեթոդների կիրառմամբ,

իե. երկրաբանական տեղեկատվական տեխնոլոգիաների և երկրաբանական գիտության այլ ասպարեզներում գիտական և գիտատեխնոլոգիական հետազոտությունների, ինչպես նաև նշված բնագավառների հետ առնչվող քիմիական, սպեկտրալ, ջրաերկրաքիմիական, մանրադիտակային և այլ տիպի անալիտիկ աշխատանքների կազմակերպում և իրականացում:

2) գիտական, գիտատեխնոլոգիական և ճարտարագիտատեխնիկական կադրերի պատրաստմանը, մասնագիտական զարգացմանը և վերաորակավորմանը մասնակցությունը.

3) հետազոտական համալսարանի հետ համագործակցությամբ բարձրագույն կրթության երկրորդ և երրորդ մակարդակների կրթական ծրագրերի իրականացմանը մասնակցությունը՝ օրենքով և կնքված պայմանագրերով սահմանված կարգով.

4) գիտական արդյունքի ներդրմանը, մտավոր սեփականության կառավարմանը, տեխնոլոգիաների փոխանցմանը և առևտրայնացմանը նպաստելը.

5) հայրենական, օտարերկրյա և միջազգային գիտական, կրթական, արտադրական և նորարարական կազմակերպությունների հետ համագործակցության զարգացումը:

14. Կազմակերպությունն իր առջև դրված խնդիրները լուծելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝

1) որոշում է գիտատեխնոլոգիական գործունեության հիմնական ուղղությունները, հետազոտական ծրագրերը և թեմատիկան.

2) կազմակերպում և իրականացնում է գիտատեխնոլոգիական հետազոտություններ, փորձարարական մշակումներ, նորարարական և ներդրումային ծրագրեր.

3) կարող է ստեղծել կամ մասնակցել գիտակրթական, գիտատեխնոլոգիական և նորարարական կոնսորցիումների.

4) կարող է օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների հետ իրականացնել համատեղ գիտական աշխատանքներ և ծրագրեր.

5) հայտարարում է մրցույթներ գիտական ստորաբաժանումների ղեկավարների, գիտական, գիտատեխնոլոգիական և ճարտարագիտատեխնիկական աշխատողների թափուր տեղերի համար.

6) պլանավորում և իրականացնում է գիտական կադրերի պատրաստումը, մասնագիտական զարգացումը և ատեստավորումը՝ առնվազն յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ.

7) կազմում է կազմակերպության խմբագրական-հրատարակչական գործունեության պլանները, հրատարակում կամ հրատարակության է երաշխավորում գիտական աշխատանքներ.

8) կառավարում է իր գործունեության արդյունքում ստեղծված մտավոր սեփականությունը, գիտական արդյունքը և տեխնոլոգիաները՝ օրենքով սահմանված կարգով.

9) վարում է բարձրագույն կրթության և գիտության կառավարման տեղեկատվական համակարգի համար անհրաժեշտ տվյալների հաշվառումը.

10) իրականացնում է սույն կանոնադրությամբ և օրենքով նախատեսված այլ գործառույթներ:

15. Կազմակերպության գիտական, գիտատեխնոլոգիական, ճարտարագիտատեխնիկական, վարչական և այլ աշխատողների կազմը, հաստիքացուցակը, մրցութային ընտրության, մասնագիտական զարգացման և ատեստավորման ընդհանուր սկզբունքները սահմանվում են օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N 2298-Ն որոշմամբ հաստատված ատեստավորման կարգով, սույն կանոնադրությամբ և կազմակերպության ներքին իրավական ակտերով:

16. Կազմակերպությունը կարող է մասնակցել հայրենական և միջազգային գիտական ընկերությունների, միությունների և ցանցերի գործունեությանը, հրավիրել գիտաժողովներ, կազմակերպել սեմինարներ, դասընթացներ և այլ գիտակրթական միջոցառումներ:

17. Կազմակերպությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) գիտամեթոդական, գիտակրթական և գիտատեխնոլոգիական խորհրդատվության մատուցում.

2) մասնագիտական վերապատրաստում և վերաորակավորում.

3) գիտատեխնոլոգիական հետազոտությունների, փորձարարական մշակումների և նորարարական ծրագրերի իրականացում.

4) օրենքով թույլատրված դեպքերում և կարգով պետական առաջադրանքի կատարումից ազատ շարժական և անշարժ գույքի վարձակալության հանձնում.

5) սեփական գիտատեխնոլոգիական մշակումների, տեխնոլոգիաների, մտավոր սեփականության օբյեկտների և դրանց օգտագործման իրավունքների իրացում.

6) օրենքով չարգելված և կազմակերպության կանոնադրական նպատակներին համապատասխան այլ գործունեություն, եթե դրա իրականացման իրավունքը նախատեսված է հիմնադրի որոշմամբ կամ օրենքով:

18. Ձեռնարկատիրական գործունեությունից, գիտական արդյունքի ներդրումից, մտավոր սեփականության կառավարման կամ այլ աղբյուրներից ստացված շահույթն օգտագործվում է կազմակերպության կանոնադրական խնդիրների իրականացման և զարգացման ծրագրերի համար:

19. Կազմակերպությունը կարող է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվել միայն համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

20. Կազմակերպության կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան՝ հիմնադրի, լիազորված պետական մարմնի՝ ի դեմս՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ լիազոր մարմին), կոլեգիալ կառավարման մարմնի (այսուհետ՝ հոգաբարձուների խորհուրդ), գիտական խորհրդի և կառավարման գործադիր մարմնի (այսուհետ՝ տնօրեն) միջոցով:

21. Հիմնադրի լիազորությունները սահմանվում են «Բարձրագույն կրթության և գիտության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ օրենքներով և հիմնադրի որոշումներով:

22. Լիազոր մարմինը՝

1) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է կառավարման մարմինների ձևավորումը և լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

2) նշանակում է հոգաբարձուների խորհրդի նախագահին և սույն կանոնադրությամբ նախատեսված անդամներին.

3) իրականացնում է կազմակերպության գործունեության վերահսկողությունը.

4) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության տնօրենի կամ հոգաբարձուների խորհրդի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության

պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները.

5) լսում է կազմակերպության գործունեության վերաբերյալ հաշվետվություններ և քննում է գործունեության ստուգման կամ վերստուգման արդյունքները.

6) իրականացնում է վերահսկողություն կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում ընդունում է որոշումներ կամ համաձայնություն է տալիս կազմակերպության գույքի օտարման, վարձակալության հանձնման կամ խոշոր գործարքների կնքման համար.

8) օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն իրեն վերապահված դեպքերում հաստատում է համապատասխան հաշվետվությունները կամ այլ փաստաթղթերը, իսկ մնացած դեպքերում դրանք ընդունում է ի գիտություն և իրականացնում վերահսկողական գործառույթներ.

9) ստեղծում է կազմակերպության լուծարման հանձնաժողով և հաստատում լուծարման հաշվեկշիռը.

10) իրականացնում է հիմնադրի որոշումներով, օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

23. Հոգաբարձուների խորհուրդը կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմինն է, որի ձևավորումն ու գործառույթները սահմանվում են օրենքով և սույն կանոնադրությամբ:

24. Հոգաբարձուների խորհուրդը կազմված է 9 անդամից: Հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը հինգ տարի է, եթե օրենքով կամ հիմնադրի որոշմամբ այլ ժամկետ սահմանված չէ:

25. Հոգաբարձուների խորհրդի նախագահին և 5 անդամին նշանակում է լիազոր մարմնի ղեկավարը: Հոգաբարձուների խորհրդի 3 անդամներն ընտրվում են կազմակերպության գիտական անձնակազմի ժողովում:

26. Հոգաբարձուների խորհրդի անդամ կարող է լինել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձը: Լիազոր մարմնի կողմից նշանակվող անդամները կարող են լինել պետական կառավարման, գիտության, բարձրագույն

կրթության, նորարարության, տնտեսության կամ կազմակերպության գործունեության ոլորտներին առնչվող փորձագետներ կամ ներկայացուցիչներ:

27. Կազմակերպության գիտական անձնակազմի կողմից ընտրվող անդամ կարող է լինել կազմակերպության հիմնական աշխատողը, որը ընտրության պահին աշխատում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված աշխատաժամանակի առնվազն 75 տոկոսի տևողությամբ և չի զբաղեցնում վարչական կամ ղեկավար պաշտոն:

28. Կազմակերպության տնօրենը չի կարող լինել հոգաբարձուների խորհրդի անդամ: Տնօրենը կարող է մասնակցել հոգաբարձուների խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով, եթե խորհուրդը տվյալ հարցով այլ որոշում չի ընդունել:

29. Հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունները դադարում են ժամկետի ավարտով, հրաժարականով, օրենքով կամ սույն կանոնադրությամբ սահմանված անհամատեղելիության կամ շահերի բախման չվերացման դեպքում, ինչպես նաև անդամին նշանակած կամ ընտրած մարմնի որոշմամբ:

30. Հոգաբարձուների խորհրդի իրավասությանն են պատկանում՝

1) կազմակերպության հնգամյա ռազմավարական և երկարաժամկետ զարգացման ծրագրերի հաստատումը՝ գիտական խորհրդի մասնագիտական եզրակացության կամ հաստատման հիման վրա.

2) կազմակերպության տարեկան բյուջեի, բյուջեի փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և կազմակերպության գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը.

3) տնօրենի ընտրության, նշանակման, նրա հետ աշխատանքային պայմանագիր կնքելու և լիազորությունները դադարեցնելու մասին որոշումների ընդունումը.

4) տնօրենի հաշվետվությունների լսումը.

5) «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հանրային գիտական կազմակերպությունների հոգաբարձուների խորհրդին վերապահված լիազորությունների իրականացումը.

6) կազմակերպության անձեռնմխելի կապիտալի ձևավորման, համալրման, ներդրման և օգտագործման վերաբերյալ որոշումների ընդունումը.

7) հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի, շահերի բախման կառավարման և նիստերի անցկացման ներքին կանոնների հաստատումը.

8) հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը՝ սույն կանոնադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում.

9) գիտական խորհրդի աշխատակարգի և ձևավորման ընթացակարգի հաստատումը.

10) սույն կանոնադրությամբ և օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

31. Հոգաբարձուների խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի աշխատանքները.

2) գումարում է հոգաբարձուների խորհրդի նիստերը և նախագահում դրանք.

3) կազմակերպում է նիստերի արձանագրությունների վարումը.

4) օրենքով նախատեսված դեպքերում հոգաբարձուների խորհրդի քննարկմանն է ներկայացնում հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծ.

5) կազմակերպության տնօրենի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր.

6) իրականացնում է սույն կանոնադրությամբ և խորհրդի աշխատակարգով նախատեսված այլ լիազորություններ:

32. Հոգաբարձուների խորհրդի նախագահի բացակայության դեպքում, հոգաբարձուների խորհրդի որոշմամբ, նրա պարտականությունները կատարում է խորհրդի անդամներից մեկը:

33. Հոգաբարձուների խորհրդի հերթական նիստերը գումարվում են ոչ պակաս, քան յուրաքանչյուր տարին մեկ անգամ: Արտահերթ նիստ կարող է հրավիրվել հոգաբարձուների խորհրդի նախագահի նախաձեռնությամբ, լիազոր մարմնի, տնօրենի կամ հոգաբարձուների խորհրդի առնվազն երկու անդամի պահանջով: Պահանջը ներկայացվելուց հետո նիստը հրավիրվում է 30 օրվա ընթացքում, եթե պահանջում ավելի կարճ ժամկետ նշված չէ և այն չի հակասում օրենքին:

34. Հոգաբարձուների խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են

նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե օրենքով, սույն կանոնադրությամբ կամ խորհրդի աշխատակարգով տվյալ հարցի համար ավելի բարձր շեմ սահմանված չէ: Տնօրենի ընտրության, նշանակման և լիազորությունների դադարեցման վերաբերյալ որոշումները ընդունվում են խորհրդի անդամների ընդհանուր թվի մեծամասնությամբ:

35. Հոգաբարձուների խորհրդի անդամի ձայնի փոխանցումը չի թույլատրվում: Նիստերը կարող են անցկացվել նաև հեռավար կամ էլեկտրոնային եղանակով, եթե ապահովվում են անդամների նույնականացումը, քննարկմանը մասնակցելու և քվեարկելու հնարավորությունը, ինչպես նաև արձանագրության կազմումը:

36. Շահերի բախում ունեցող հոգաբարձուների խորհրդի անդամը պարտավոր է մինչև հարցի քննարկումը գրավոր կամ բանավոր հայտարարություն ներկայացնել շահերի բախման մասին և չմասնակցել տվյալ հարցի քվեարկությանը: Շահերի բախման հայտարարությունը ներառվում է նիստի արձանագրության մեջ:

37. Հոգաբարձուների խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցած խորհրդի անդամները կամ խորհրդի աշխատակարգով սահմանված անձինք:

38. Արձանագրության մեջ նշվում են նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը, նիստի անցկացման եղանակը, մասնակցելու իրավունք ունեցող անձանց թիվը, մասնակցած անձանց անունները և պաշտոնները, օրակարգը, քննարկված հարցերի հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները, շահերի բախման հայտարարությունները և ընդունված որոշումները:

39. Արձանագրությունները կազմվում են հայերեն: Դրանք կարող են կազմվել նաև օտար լեզվով: Տեքստերի միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տեքստին:

40. Հոգաբարձուների խորհրդի անդամները, կազմակերպության տնօրենը և նրա տեղակալները պարտավոր են իրենց լիազորություններն իրականացնել բարեխղճորեն և ողջամտորեն՝ ի շահ կազմակերպության և Հայաստանի Հանրապետության: Նրանք պարտավոր են բացահայտել շահերի բախումը և ձեռնպահ մնալ շահերի բախում պարունակող որոշումների ընդունմանը մասնակցելուց:

41. Կազմակերպության գիտական խորհուրդը կազմակերպության գիտատեխնոլոգիական գործունեությունը համակարգող և կարգավորող կոլեգիալ մարմին է:

42. Գիտական խորհուրդը ձևավորվում և գործում է առավելագույնը հինգ տարի ժամկետով: Գիտական խորհրդի անդամների 20 տոկոսի կարգավիճակի փոփոխությունը հիմք է գիտական խորհրդի վերակազմավորման համար:

43. Գիտական խորհրդի անդամների թիվը չի կարող գերազանցել կազմակերպության գիտական անձնակազմի 1/4-ը: Հրավիրված անդամների թիվը չպետք է գերազանցի գիտական խորհրդի անդամների թվի 1/4-ը:

44. Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են կազմակերպության տնօրենը, գիտության գծով փոխտնօրենը, գիտական քարտուղարը, գիտական ստորաբաժանումների ղեկավարները, կազմակերպության գիտական աշխատողների կողմից ընտրված առաջատար գիտական ներկայացուցիչները, ինչպես նաև սույն կանոնադրությամբ և գիտական խորհրդի աշխատակարգով նախատեսված կարգով հրավիրված այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

45. Գիտական խորհրդի անդամների ընտրության, առաջադրման, փոխարինման, նիստերի հրավիրման, քվորումի, քվեարկության, հեռավար մասնակցության, արձանագրությունների վարման, որոշումների հրապարակման կամ հասանելիության և շահերի բախման կառավարման կարգերը սահմանվում են գիտական խորհրդի աշխատակարգով:

46. Կազմակերպության գիտական խորհուրդը իրավասու է՝

1) ներկայացնելու առաջարկություններ կազմակերպության կառուցվածքային փոփոխությունների վերաբերյալ.

2) հաստատելու գիտատեխնոլոգիական գործունեությանն առնչվող ներքին փաստաթղթերը.

3) հսկողություն իրականացնելու կազմակերպությունում կատարվող հետազոտությունների և մշակումների մակարդակի ու որակի նկատմամբ.

4) հաստատելու տնօրենի տարեկան գիտական զեկույցը.

5) հաստատելու կազմակերպության զարգացման ռազմավարության գիտական և մասնագիտական մասը.

6) քննարկելու և հաստատելու կազմակերպության գիտական հետազոտությունների հիմնական ուղղությունները, գիտահետազոտական աշխատանքների թեմատիկան ու ծրագրերը, գիտական կադրերի պատրաստման և միջազգային գիտական համագործակցության հարցերը.

7) քննարկելու և հրատարակության երաշխավորելու գիտական աշխատանքները.

8) հաստատելու գիտական աշխատողների ատեստավորման արդյունքները.

9) իրականացնելու օրենքով, սույն կանոնադրությամբ և գիտական խորհրդի աշխատակարգով նախատեսված այլ լիազորություններ:

47. Գիտական խորհուրդը առնվազն տարեկան մեկ անգամ քննարկում է տնօրենի և գիտական ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները և առաջարկությունները կազմակերպության գիտական գործունեության վերաբերյալ:

48. Կազմակերպության գիտահետազոտական ստորաբաժանումների ղեկավարներն ընտրվում են գիտական խորհրդի կողմից՝ հինգ տարի ժամկետով: Կազմակերպության պաշտոնական կայքում ընտրությունների պայմանների և ժամկետի մասին հայտարարությունը հրապարակվում է ընտրությունից առնվազն մեկ ամիս առաջ:

49. Գիտահետազոտական ստորաբաժանումների ղեկավարների թեկնածուների առաջադրման համար փաստաթղթերը ներկայացվում են կազմակերպության գիտական քարտուղարին: Գրանցվում են այն թեկնածուները, որոնք գրավոր համաձայնություն են տալիս ընտրություններին մասնակցելու մասին:

50. Գիտահետազոտական համապատասխան ստորաբաժանման գիտական անձնակազմն իր ժողովում քննարկում է գրանցված թեկնածությունները և փակ գաղտնի քվեարկությամբ, գիտական անձնակազմի անդամների առնվազն երկու երրորդի մասնակցությամբ, կարծիք է հայտնում յուրաքանչյուր թեկնածության վերաբերյալ: Քննարկման և քվեարկության արդյունքների մասին արձանագրությունը ներկայացվում է գիտական խորհուրդ:

51. Գիտահետազոտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում ընտրվելու մասին որոշումն ընդունվում է գիտական խորհրդի կողմից՝ փակ գաղտնի քվեարկությամբ, մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

52. Եթե քվեարկության առաջին փուլում ընտրությունը չի կայանում, անցկացվում է քվեարկության երկրորդ փուլ: Եթե երկրորդ փուլում նույնպես ընտրությունը չի կայանում, տնօրենը ընդունում է որոշում գիտահետազոտական ստորաբաժանման ղեկավարի պաշտոնակատարի նշանակման մասին՝ մինչև երկու տարի ժամկետով, և կազմակերպվում է նոր ընտրություն:

53. Կազմակերպության ընթացիկ գործունեությունը ղեկավարում է տնօրենը, որը պատասխանատու է կազմակերպության գործունեության համար:

54. Տնօրենը կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի որոշումների կատարումը:

55. Տնօրենին նշանակում և պաշտոնից ազատում է հոգաբարձուների խորհուրդը՝ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

56. Տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, սույն կանոնադրությամբ և նրա հետ կնքված աշխատանքային պայմանագրով:

57. Կազմակերպության տնօրենն իր առաջադրման ժամանակ և պաշտոնավարման ընթացքում չի կարող լինել որևէ կուսակցության անդամ, պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն: Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացառությամբ գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքի, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

58. Կազմակերպության տնօրենի պաշտոնում չի կարող նշանակվել այն անձը՝

1) որը դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ.

2) որին, օրենքի համաձայն, արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել.

3) որը նախընթաց երեք տարվա ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար.

4) որը չի համապատասխանում օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված որակավորման կամ անհամատեղելիության պահանջներին:

59. Կազմակերպության տնօրենն ընտրվում է բաց մրցույթի միջոցով՝ հոգաբարձուների խորհրդում փակ գաղտնի քվեարկությամբ, հինգ տարի ժամկետով:

Մրցույթի հայտարարությունը, թեկնածուների փաստաթղթերի ցանկը, ներկայացման ժամկետները, զարգացման ծրագրի պահանջները և մրցույթի անցկացման այլ պայմանները հրապարակվում են կազմակերպության պաշտոնական կայքում և օրենքով սահմանված այլ եղանակով:

60. Տնօրենի յուրաքանչյուր թեկնածու մրցույթին մասնակցելու համար ներկայացնում է կազմակերպության զարգացման ծրագիր: Տնօրենի պաշտոնում ընտրված է համարվում այն թեկնածուն, որի օգտին քվեարկել է հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի մեծամասնությունը: Ընտրված անձի հետ աշխատանքային պայմանագիրը կնքում է հոգաբարձուների խորհրդի նախագահը:

61. Եթե տնօրենի մրցույթը չի կայանում կամ տնօրենը չի ընտրվում, հայտարարվում է նոր մրցույթ: Տնօրենի թափուր պաշտոնի առաջացման կամ ժամանակավոր բացակայության դեպքում պաշտոնակատար նշանակվում է հոգաբարձուների խորհրդի կողմից՝ օրենքով թույլատրված ժամկետով: Տնօրենի ժամանակավոր բացակայության դեպքում նրա պարտականությունները կարող են կատարվել նաև տնօրենի գրավոր հրամանով նշանակված տեղակալի կողմից:

62. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նույն կազմակերպությունում ընտրվել տնօրենի պաշտոնում:

63. Կազմակերպության տնօրենի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, եթե՝

1) անձը դիմել է դրա համար.

2) լրացել է նրա 65 տարին.

3) անձը իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի.

4) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան չորս ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի.

5) նա ավելի քան երեք օր անընդմեջ անհարգելի պատճառներով չի ներկայացել աշխատանքի.

6) նա նշանակվել է օրենքի պահանջների խախտմամբ, կամ առաջ են եկել սույն կանոնադրությամբ նախատեսված անհամատեղելիության հանգամանքներ.

7) նա իր գործառույթներն իրականացնելիս կազմակերպությանն իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է կազմակերպության տարեկան բյուջեի հինգ տոկոսը.

8) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.

9) օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը.

10) մեկ տարվա ընթացքում օրենքի խախտման համար ենթարկվել է կրկնակի կարգապահական պատասխանատվության.

11) առաջացել են քաղաքացիության, սնանկության, հարկային կամ գույքային պարտավորությունների, մահվան կամ օրենքով նախատեսված այլ հանգամանքներ, որոնք հիմք են տնօրենի լիազորությունների դադարեցման համար.

12) առաջացել է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ այլ օրենքով նախատեսված այլ հիմք:

64. Կազմակերպության տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազոր մարմնի որոշումներով, հոգաբարձուների խորհրդի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը և ֆինանսական միջոցները.

3) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

5) օրենքով սահմանված կարգով բացում, վարում և հայտարարագրում է կազմակերպության բանկային, գանձապետական կամ այլ հաշիվներն ու ենթահաշիվները.

6) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

7) հոգաբարձուների խորհրդի հաստատած բյուջեի և ռազմավարական ծրագրի շրջանակներում սահմանում է կազմակերպության կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները, եթե օրենքով կամ հիմնադրի որոշմամբ այլ կարգ նախատեսված չէ.

8) հիմնադրի կամ լիազոր մարմնի համապատասխան որոշման առկայության դեպքում հաստատում է կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները.

9) հիմնադրի կամ լիազոր մարմնի համապատասխան որոշման հիման վրա նշանակում է կազմակերպության հիմնարկների, ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարներին և նրանց տալիս է համապատասխան լիազորագրեր.

10) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

11) հոգաբարձուների խորհրդի հետ համաձայնեցնում է տնօրենի արձակուրդի և գործուղման ժամանակահատվածն ու նպատակահարմարությունը.

12) ապահովում է կազմակերպության պաշտոնական կայքում հրապարակման ենթակա տեղեկությունների հրապարակումը և կառավարման տեղեկատվական համակարգի տվյալների վարումը.

13) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և կազմակերպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

65. Կազմակերպության հիմնարկները, մասնաճյուղերը և ներկայացուցչությունները ստեղծվում են հիմնադրի որոշմամբ կամ, հիմնադրի թույլտվության դեպքում, լիազոր մարմնի որոշմամբ: Դրանց հաշվառումը, գրանցումը, կանոնադրությունների հաստատումը և ղեկավարների նշանակումը կատարվում են օրենքով սահմանված կարգով:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

66. Կազմակերպության գույքը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող գույքից, կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով ամրացված պետական գույքից:

67. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին, լիազոր մարմնի իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

68. Հիմնադիրը կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ իրավունքներ չունի՝ բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի և օրենքով նախատեսված այլ դեպքերի:

69. Կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով ամրացված պետական գույքը չի կարող օտարվել, գրավադրվել կամ անհատույց օգտագործման հանձնվել, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Այդ գույքի օգտագործումը, պահպանումը, բարելավումը, հետ վերցնելը և վարձակալության հանձնելը կատարվում են օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

70. Կազմակերպությունը կարող է օրենքով նախատեսված դեպքերում և կարգով վարձակալության հանձնել իրեն ամրացված կամ սեփականության իրավունքով պատկանող տարածքները, շենքերը, շինությունները կամ այլ գույքը կրթական, հրատարակչական, գիտատեխնոլոգիական, նորարարական կամ սպասարկման նպատակներով: Վարձակալության մակերեսի, նպատակի, ժամկետի, վճարների և դրանց օգտագործման հարցերը կարգավորվում են «Բարձրագույն կրթության և գիտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ կիրառելի իրավական ակտերով:

71. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը: Կազմակերպության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում միայն դատական կարգով:

72. Կազմակերպության տարեկան բյուջեն, բյուջեի փոփոխությունները, տարեկան ֆինանսական հաշվետվությունները և գործունեության տարեկան հաշվետվությունները նախապատրաստվում են տնօրենի կողմից և հաստատվում հոգաբարձուների խորհրդի կողմից: Լիազոր մարմինը դրանք ստանում է վերահսկողության, հաշվառման կամ օրենքով իրեն վերապահված այլ գործառույթների իրականացման համար:

73. Կազմակերպության ֆինանսական միջոցները ձևավորվում են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից, այդ թվում՝ բազային, նպատակային, գիտական դրամաշնորհային և օրենքով նախատեսված այլ պետական ֆինանսավորումից.

2) կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից.

3) հանրապետության և արտերկրի իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ պայմանագրային աշխատանքներից.

4) իրավաբանական և ֆիզիկական անձանց, այդ թվում՝ արտերկրի, նվիրատվություններից, դրամաշնորհներից, ինչպես նաև կտակներից.

5) կազմակերպության գույքից և գույքային իրավունքներից ստացված եկամուտներից.

6) գիտական արդյունքի ներդրումից, մտավոր սեփականության կառավարումից, տեխնոլոգիաների փոխանցումից և սեփական մշակումների իրացումից ստացված միջոցներից.

7) կապիտալ ներդրումային ծրագրերից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

74. Պետական բյուջեից հատկացված և հաշվետու տարվա ընթացքում չօգտագործված միջոցները կարող են օգտագործվել կազմակերպության ենթակառուցվածքների զարգացման, գիտատեխնոլոգիական հետազոտությունների, փորձարարական մշակումների և նորարարական գործունեության նպատակներով՝ օրենքով սահմանված կարգով:

75. Կազմակերպության ֆինանսական գործընթացները իրականացվում են օրենքով սահմանված բանկային, գանձապետական կամ ենթահաշիվների միջոցով:

Կազմակերպությունը պարտավոր է հայտարարագրել իր բոլոր հաշիվները, իսկ չհայտարարագրված հաշիվներով գործարքներ կատարելը չի թույլատրվում:

76. Կազմակերպության հաշվետու տարվա շահույթի առնվազն 10 տոկոսը ուղղվում է անձեռնմխելի կապիտալի համալրմանը: Անձեռնմխելի կապիտալի ձևավորման, համալրման, ներդրման և օգտագործման վերաբերյալ որոշումներն ընդունում է հոգաբարձուների խորհուրդը՝ օրենքով սահմանված կարգով և կազմակերպության ռազմավարական ծրագրին համապատասխան:

77. Անձեռնմխելի կապիտալի միջոցները կարող են ներդրվել օրենքով թույլատրված ֆինանսական գործիքներում, այդ թվում՝ պետական պարտատոմսերում, առևտրային բանկերում կամ ավանդներում, հոգաբարձուների խորհրդի հաստատած ներդրումային ռազմավարությանը համապատասխան:

78. Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը ենթակա է վերստուգման (աուդիտի) կազմակերպության կողմից ընտրված անկախ աուդիտորական կազմակերպության կողմից՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

5. ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

79. Կազմակերպությունը մինչև յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ը իր պաշտոնական կայքում հրապարակում է նախորդ տարվա գործունեության տարեկան հաշվետվությունը, տարեկան ֆինանսական հաշվետվությունը, ռազմավարական ծրագրի կատարման վերաբերյալ տեղեկությունը և աուդիտորի եզրակացությունը, եթե օրենքով այլ ժամկետ կամ հրապարակման այլ կարգ սահմանված չէ:

80. Կազմակերպությունն ընդունում, հրապարակում և պարբերաբար վերանայում է հնգամյա ռազմավարական ծրագիրը, ակադեմիական բարեվարքության, հետազոտական էթիկայի և շահերի բախման կառավարման ներքին կանոնակարգերը:

81. Կազմակերպությունը գրանցվում է բարձրագույն կրթության և գիտության կառավարման տեղեկատվական համակարգում և վարում է իր ենթակառուցվածքների,

վարչական, գիտական, գիտատեխնոլոգիական և ճարտարագիտատեխնիկական կազմի հաշվառումը՝ օրենքով սահմանված կարգով:

82. Կազմակերպության կառավարման մարմինների անդամները, աշխատողները և հրավիրված փորձագետները պարտավոր են պահպանել ակադեմիական բարեվարքության, հետազոտական էթիկայի, տվյալների պաշտպանության, գաղտնիության և շահերի բախման կառավարման կանոնները:

83. Կազմակերպության տարածքներում և կազմակերպության ռեսուրսների, անվանման կամ տարբերանշանների օգտագործմամբ չի թույլատրվում քաղաքական, կուսակցական կամ կրոնական քարոզչություն:

84. Կազմակերպությունը ապահովում է հետազոտությունների անվտանգ իրականացման, գիտական արդյունքների հավաստիության, բողոքների, խախտումների և շահերի բախման մասին հաղորդումների ներքին արձագանքման ընթացակարգերի առկայությունը:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

85. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Բարձրագույն կրթության և գիտության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

86. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել 100 տոկոս պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի, ինչպես նաև համայնքային ոչ առևտրային կազմակերպության, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

87. Խոշորացված հանրային հետազոտական համալսարանների ձևավորման կամ կազմակերպության վերջնական կարգավիճակի որոշման դեպքում կազմակերպության սեփականության իրավունքով պատկանող կամ նրան ամրացված գույքի անցումը կատարվում է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 12-րդ մասով և այլ կիրառելի իրավական ակտերով սահմանված կարգով:

88. Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

89. Կազմակերպության լուծարման դեպքում լուծարման հանձնաժողովը ստեղծվում, լուծարման հաշվեկշիռը հաստատվում և պարտատերերի պահանջները բավարարվում են օրենքով սահմանված կարգով:

90. Կազմակերպության լուծարման դեպքում պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած դրամական միջոցները փոխանցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: